«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Հետազոտող ուսուցիչ՝ Ժենյա Տիգրանի Ավետիսյան

Մրգաշատի Մ. Մաղաքյանի անվան թիվ 2 միջն. դպրոց ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Մարգուշա Գևորգյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1 ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

1.1 Անգլերենի դասաժամին սովորողների լեզվամտածողության զարգացումը խմբային քննարկումների միջոցով 5

1.2 Խմբային քննարկումների դերը սովորողների սոցիալական ունակությունների զարգացման առումով 9

Եզրակացություններ՝ 12

Դասավանդման մեր փորձից: Օրվա դասի պլան՝ դասավանդման համագործակցային մեթոդի կիրառությամբ 13

Օգտագործված գրականության ցանկ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտելիքը, տեղեկացվածությունը անձի ինքնաճանաչման, աշխարհաճանաչողության, ներանձնային և միջանձնային հարաբերությունների կառուցման հիմքն են հանդիսանում: Այս ամենից կարելի է եզրահանգել, որ կրթությունը իրականացնողների՝ ուսուցիչների վրա մեծ պարտականություն է դրված: Ուսուցիչն այսօր կանգնած է բազում մարտահրավերների ու հիմնախնդիրների առաջ.

- կրթականանվերջանալիթվացողբարեփոխումները;
- ծրագրայինփոփոխությունները;
- ժամանակակից սովորողների մտածելակերպի ու պահանջների առանձնահատկություններ;
- ժամանակակիցտեխնոլոգիաներ;
- դասիկառուցմանմոտեցումներումեթոդականհնարներ, այլգործառույթներ:

Այս և մի շարք այլ գործոններ նրան ստիպում են վերանայել իր աշխատանքային զինանոցում եղած գործիքները՝ մեթոդները, աշխատաոճը, գիտելիքները, այլապեսանախորոշմանանխուսափելիկինի:

Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ- ում ամենօրյա ռեժիմով ընթանում են կրթական բարեփոխումներ, որոնց նպատակը կրթությունն այնպիսի մակարդակի բարձրացնելն է, որը երիտասարդ սերնդին հնարավորություն կտա առավելագույնչափով պատրաստ լինել ինքնուրույն կյանքի, ինքնուրույն որոշումներ կայացնելու և ինքնահաստատվելու:

Այս համատեքստում առաջնային խնդիր կարելի է դիտարկել ուսուցչի կողմից սովորողների մի շարք առանձնահատկությունների բացահայտումը, որոնց հենքի վրա էլ պիտի կառուցվի ուսումնական գործընթացը: Այդպիսի առանձնահատկություններիցեն.

- Սովորողիուժերությունները, ընդունակությունները;
- Տարիքայիննանհատականառանձնահատկությունները;
- Ուսմաննկատմամբվերաբերմունքը;
- Սովորելու մոտիվացիան;
- Օժտվածությունը;
- Կրթականառանձնահատուկկարիքները:

Այս ամենը հաշվի առնելով՝ ուսուցիչը պետք է ընտրի ուսումնական գործընթացը կազմակերպելու այնպիսի եղանակներ, որպեսզի կարողանա բավարարել բոլոր սովորողների կարիքները: Ոստի ուսուցչի դերը՝ որպես ուսուցումը կազմակերպող, համակարգող, սովորողին առաջնորդող, շատ կարևոր է: Ուսումնական գործընթացում, գիտելիքի հաղորդմանը զուգահեռ, կարևորագույն բաղադրիչ է նաև սովորողների լեզվամտածողության, սոցիալական ունակությունների զարգացումը: Այս պարագայում պետք է հիմնվել ոչ թե սուբյեկտ- օբյեկտ, այլ սուբյեկտ-սուբյեկտ կրթական մոդելի վրա՝ ամեն կեպ խրախուսելով սովորողի ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը: Այս ճանապարհին բավականին արդյունավետ է կիրառել խմբային աշխատանքներ, խմբային քննարկումներ՝ լսելի դարձնելով սովորողի դիրքորոշումը: Այս մոտեցումը թույլ կտա, որ դպրոցում սովորողն իրեն ազատ ու կարևոր զգա, անցնցում ինտեգրվի դասապրոցեսի մեջ, շփվի, համագործակցային հարաբերություններ հաստատի ընկերների հետ:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգում սովորողի դերի վերարժեվերման, վերջինիս ինքնուրույնության, լեզվամտածողության զարգացման, սոցիալականացման, արդի մարտահրավերներով:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ խմբային քննարկումների դերը սովորողի մոտ մի շարք կենսական կարողունակությունների զարգացման առումով:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է սահմանել դպրոցում ուսուցչի դերը քննարկումների ժամանակ սովորողների համագործակցային հարաբերությունների հաստատման, սոցիալական հմտությունների ձեռքբերման համատեքստում՝ այդթվում անգլերենառարկայի դասավանդման ժամանակ:

ԳԼՈՒԽ 1 ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

1.1 Անգլերենի դասաժամին սովորողների լեզվամտածողության զարգացումը խմբային քննարկումների միջոցով

Ուսումնական գործընթացում ուսուցիչների աջակցությամբ, ուղղորդմամբ խորհրդով սովորողները համակարգված համալրում են իրենց գիտելիքները, տիրապետում են մարդկային մտքի ձեռքբերումներին, արդյունքներին, ազգային ու համամարդկային բարոյականության արժեքներին, նորմերին: Ուսուցիչը հիմնական առաքելությունն է սովորողների մեջ սերմանել սեր ուսման, գիտության նկատմամբ, խթանել նրանց հետաքրքրասիրությունը նորի, անհայտի նկատմամբ, սովորեցնել սեփական վարքն ու հույզերը կառավարել, ինչպես նաև ձևավորել առողջ մտքով ու հոգեկանով սերունդ:

Այս վերջնարդյունքները գրանցելու համար ուսուցչից պահանջվում է ոչ միայն համապատասխան մասնագիտական կարողություններ ու ընդունակություններ, այլև նորսոցիալականդերիստանձնում:

Աշխատանքն այսօրվա դպրոցում ուսուցիչին ստիպում է աստիճանաբար զալ այն գիտակցմանը, որ ուսումնական գործընթացն իր նպատակին ծառայեցնելու համար հարկավոր է հրաժարվել նախկին կարծրատիպերից՝պայմանավորված ժամանակի հրամայականներով: Դրանից հետևում է, որ ուսուցիչը սոսկ տեղեկատվության կրող և հաղորդող չէ. նա աշակերտների մեջ զարգացնում է ինքնուրույն մտածելու, հսկայածավալ տեղեկատվության մեջ կողմնորոշվելու, մշակելու և դրանք նպատակայինուարդյունավետօգտագործելուկարողություն:

Ժամանակակից ուսուցչը պետք է նախ և առաջ ինքը զինվի այսօրեական կրթական համակարգին բնորոշ կարողունակություններով, սկսի վերանայել իր մոտեցումները ուսումնական գործընթացի մասին, որպեսզի կարողանա բավարարել նոր սերնդի կրթական պահանջմունքները: Ստացվում է, որուսուցիչը պետք է.

- Սովորողինտակայունխորգիտելիքներ;
- Կարողանա կանխատեսել գործունեության տարբեր ձևերի ազդեցությունը սոցիալականացման և անձնային որակների ձևավորման վրա;
- Կարողանա նախապատրաստել սովորողների իմացական և բարոյահոգեբանական սահուն անցումը դեպի հաջորդ փուլ՝ բուհ և ինքնուրույնկյանք;
- Ձևավորիուզարգացնիսովորողներիլեզվամտածողությունը:
- Նպաստիվերջիններիսոցիալականհմտությունների զարգացմանը:

Ուսուցիչը թեև ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու իրականացնողն է, սակայն նա անհատականություն է իր ուժեղ ու թույլ կողմերով, աշխատառճով, միջանձնային հարաբերություններ հաստատելու կարողությամբ, աշխարհայացքով, արժեհամակարգով, որոնք իրենց հետքն են թողնում ուսուցիչ– սովորող փոխհարաբերությունների վրա: Այնուամենայնիվ, փաստ է, որ կրթության որակը մեծապես կախված է այն հանգամանքից, թե ուսուցիչը որչափ է տիրապետում իր՝ օրենքով սահմանված

պաշտոնային պարտականություններին, ինչքանով է պատրաստ ինքնակրթության, նոր կարողունակությունների ձեռքբերման: Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ[1]:

Իր գործունեությունն անհրաժեշտ և պատշաճ մակարդակով իրականացնելու, ցանկալի արդյունքներ գրանցելու համար հմուտ ուսուցիչը փորձում է պարզել աշակերտների վերաբերմունքն ուսման նկատմամբ և խմբավորում է նրանց ըստ հետևյալ չափանիշների.

1. աշակերտներ, ովքեր ձգտում են ձեռք բերել գիտելիքներ, հմտություններ, մասնագիտական կարողություններ և հիմնականում բոլոր առարկաները լավ են սովորում: Նրանց հետաքրքրությունների շրջանակը լայն է.

2. աշակերտներ, ովքեր հետաքրքրված են գործունեության մի քանի տեսակներով: Թե ակտիվեն, բացարագեն ձանձրանում:

3. աշակերտներ, ովքեր հետաքրքրված են միայն իրենց սիրած, նախընտրած առարկաներով: Նրանց գիտելիքների ձեռքբերումը սահմանափակվում է միայն նեղ մասնագիտության շրջանակներում: Նրանց հատուկ է կենտրոնացվածությունը, գիտելիքների ձեռքբերման ընտրողականությունը.

4. աշակերտներ, ովքեր ընդգրկված են «անաշխատասերների» խմբում: Նրանք ուսման նկատմամբ անտարբեր են, հաճախ են բացակայում դասերից, չեն մասնակցում դասարանական, դպրոցական և արտադպրոցական միջոցառումներին: Պատճառները շատ են:

Այդ ամենի իմացությունը հնարավորություն կընձեռի ուսուցչին գտնել օպտիմալ լուծումներ: Այս ամենի մշտադիտարկումը թույլ կտա, որ ուսուցիչն ավելի հեշտությամբ կարողանա ընտրել այն եղանակը, որով կազմակերպելու է ուսումնական գործընթացը:

Սովորողին լսելու, նրա հետաքրքրությունների շրջանակին ծանոթանալու եղանակներից է դասի ընթացքում խմբային քննարկումներ իրականացնելը: Այս եղանակով ուսուցիչը նաև նպաստում է սովորողի լեզվամտածողության զարգացմանը, քանի որ քննարկումների ընթացքում սովորողներն առավել ակտիվ են՝ հարցնում են, պատասխանում, բանավիճում:

Ընդունված է ասել, որ մարդը մտածում է լեզվով: Թվում է, թե մտածելն ու խոսելը, մտածողությունն ու լեզուն առանձին գոյություն ունեցող երևույթներ են, և ցանկացած պահի հնարավոր է դրանք տարանջատել: Սակայն դա այդպես չէ. մտածողությունն ու լեզուն հանդես են գալիս համատեղ, և գործնականում ու բնականորեն անհնար է զատորոշել, թե ինչ է լեզուն որպես առանձին երևույթ, և ինչ է մտածողությունը որպես մեկ այլ երևույթ: Հնարավոր չէ խոսել և չմտածել: Իսկ եթե մտածում ես, ուրեմն խոսում ես, քանի որ մտածելը հենց խոսելն է: Մտածում ես խոսելով և խոսում ես մտածելով, թեև հնարավոր է՝ սխալ մտածես. չկա առանձին լեզու, և չկա առանձին մտածողություն[2]:

Այստեղից կարելի է եզրահանգել, որ խմբային քննարկումներ ժամանակ զարգանում է ոչ միայն սովորողի լեզուն, այլ նաև մտածողությունը՝ հնարավորություն տալով սովորողին կշռադատել, դատողություններ, գտնել նմանություններն ու տարբերությունները, ուսումնասիրվող թեմային տալ սեփական գնահատականները, քննադատաբար մոտենալ այս կամ այն բացասական երևույթին: Արդյունքում զարգանում է նաև քննադատական մտածողությունը:

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ հանրակրթության մասին օրենք:

Լեզվական և հաղորդակցական կարողություններն անկյունաքարային են ցանկացած գործունեություն ծավալելու ընթացքում: Այս կարողության բնականոն զարգացումով է պայմանավորված նաև հանրակրթական հաստատությունում սովորողի զարգացումն ու մտավոր առաջընթացը, ուստի և ցանկացած ուսումնական գործընթացի անբաժանելի ու փոխկապակցված բաղադրիչը հենց բնականոն զարգացող հաղորդակցումն է: Խմբային քննարկումների առկայությունը անգլերենի դասին կարող է մեծ նշանակություն ունենալ սովորողների մոտ խոսքային կարողությունների զարգացման գործում: Քննարկման ընթացքում հարստանում է սովորողների բառային պաշարը, բառն իր բոլոր իմաստներով ու կաղապարներով դրվում է կիրառության մեջ, սովորողի մոտ զարգանում է օտար լեզվով մտածելու, հաղորդակցվելու, դիմացինի խոսքը հասկանալու, գնահատելու ու պատասխանելու կարողությունը: Այս մեթոդական հնարը ապահովում է նաև դասապրոցեսում հետադարձ կապ: Ուսուցիչն ուղիղ կերպով ստանում է այն, ինչն ակնկալում էր ունենալ՝ հաշվի առնելով դասի վերջնարդյունքը:

Օտար լեզվի դասավանդման շրջանակներում՝ այս պարագայում անգլերենի դասաժամին, շատ կարևոր է պայմաններ ստեղծել, որ սովորողի դերը լինի ավելի ակտիվ, նա ուղղակի կերպով լինի դասի ընթացքի կենտրոնում, չլինի պասիվ, այլ հնարավորինս շատ խոսի, մեկնաբանի, կարծիք հայտնի: Ակտիվ խոսքը հնարավորություն է տալիս, որ սովորողն ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հղկի, կոկի, գեղեցկացնի այն:

Անշուշտ, կապակցված խոսքին դրական հատկանիշներ տալու համար հարկ է, որ դրան նախորդած մյուս փուլերը՝ լեզվական հիմնական միավորների ուսուցումը, բառային ֆոնդի հարստացումը, քերականական կառուցվածքի ձևավորումը նույնպես իրականացված լինեն արդյունավետ, քանի որ հենց այս հենքի վրա է, որ սովորողն ունենում է լիարժեք կապակցված խոսք: Այս պարագայում քննարկումների ժամանակ ուսուցիչն ունի լայն հնարավորություն ապրապնդել նաև նախորդ նյութը՝ քննարկումների միջոցով ներառարկայական կապ ստեղծելով ուսուցանված նախորդ նյութի և բուն թեմայի միջև:

Այնուամենայնիվ, այս առումով շատ կարևոր է ուսուցչի մոտեցումը, քանի որ նրա մեթոդական զինանոցն ուղղակի կերպով կարող է ազդել սովորողի ակտիվության վրա, դնել նրան շարժման մեջ, ինչն էլ ուղիղ համեմատական է արդյունավետ վերջնարդյունքին:

Դասի ժամանակ ավանդական՝ զննական, բացատրական, մեթոդների զուգադրումը ժամանակակից մեթոդական համակարգի հետ թույլ է տալիս, որ սովորողը ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում ավելի հասանելի կերպով ընկալի գիտելիքը հմտությունն ու, կարողությունը: Այսօրինակ մոտեցումը նախատեսում է ոչ թե ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այն ուսուցման ակտիվ պրակտիկ միջավարի ստեղծում: Փաստորեն, ակտիվ մեթոդները՝ այդ թվում խմբային քննարկումները նպաստում են սովորողի խոսքային մշակույթի զարգացմանը, ակտիվության բարձրացմանը և դրական ազդեցություն են ունենում սովորողների թիմում աշխատելու կարողության ձևավորմանվրա:

Մասնավորապես անգլերենի դասի ընթացքում խմբային քննարկումների օգնությամբ սովորողների լեզվամտածողության զարգացման համար շատ կարևոր է հենց ուսուցչի խոսքը, վերջինիս արտահայտչաձևը, ընտրված բառամթերքը: Ուսուցիչը խմբային քննարկումների հիմքում հիմնականում դնում է օտար լեզվով հաղորդակցման կարողությունը, ուսումնասիրված նյութի շուրջ սովորողների դիրքորոշումներ հայտնելու կարողության ձևավորումը, ուստի ինքն էլ իր խոսքով պետք է նպաստի, որ սովորողի համար որևէ անհասկանալի բառ, միտք չմնա: Ինչքան շատ խոսի սովորողը, այնքան կզարգանա վերջինիս գնահատող և դատողական խոսքկառուցելուկարողությունը:

[2] http://ysu.am/files/06T_Tonoyan.pdf Թ. Տոնոյան Գիտական հոդված, « Լեզվի մտածողության փոխհարաբերությունը տեքստում, էջ61»:

Գնահատող և դատողական խոսք կառուցելու կարողության ձևավորման տեսակետից օգտակար են դասագրքի թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծումը, տեսածի, լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրումը: Այս բոլոր դեպքերում երեխաները հակված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով պատմել, խոսք կառուցել: Այս իմաստով բնականաբար ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտներն ամբողջությամբ վերարտադրում են, որպեսզի կարողանան կապակցված ու ավարտուն մտքեր արտահայտել: Բանավոր խոսքի կառուցման և այդ խոսքում գնահատող ու դատողական մտքերը գործածելու կարողության ձևավորմանը մեծապես նպաստում են ուսուցչի խոսքը և աշակերտներին ուղղված նրա հարցերն ու առաջադրանքները: Հայտնի է, որ ուսուցչի խոսքը աշակերտների համար նմուշօրինակ է, և նրանք երբեմն, անգամ ինքնաբերաբար, կրկնում են ուսուցչին, նրադատողությունները, որոնքաստիճանաբարդառնումենսեփականոճ[3]:

Այսպիսով, կարծում ենք, որ անգլերենի դասաժամին շատ արդյունավետ միջոց էխմբաինքննարկումներիկիրառումը: Սահնարավորությունէտալիս՝

- Ուսուցչին ծանոթանալ օտար լեզվով հաղորդակցվելու սովորողի կարողություններին, գնահատել վերջինիս խոսքային կարողությունը՝ բացահայտելովթույլուժեղկողմերը;
- Սովորողը քննարկումների ժամանակ հաճախ որպես օրինակ է տեսնում լավ հաղորդակցական կարողություններ ունեցող իր ընկերոջը, որըկարողէստեղծել, մոտիվացիաառողջմրցակցություն;
- Ուսուցանվող նյութը հարցադրումների միջոցով ամփոփելը թույլ է տալիսուսուցչինկառավարելսովորողիուշադրությունը;
- Դասի ժամանակ ստեղծվում է հետադաձ կապ;
- Քննարկումների ժամանակ լավորեն կրրառվում են միջառարկայական և ներառարկայական կապեր:

[3] «ՄԽԻԹԱՐԳՈՇ», գիտամեթոդականհոդվածներ,Երևան2020, էջ263:

1.2 Խմբային քննարկումների դերը սովորողների սոցիալական ունակությունների զարգացման առումով

Մասնագիտական աճ և աշխատանքային հաջողություններ արձանագրելու համար ուսուցիչը պետք է ունենա մասնագիտական պատրաստվածություն, ընդհանուր զարգացվածություն, ճիշտ եզրահանգումներ կատարելու, աշակերտների համար պրոբլեմային իրավիճակներ ստեղծելու կարողություն, ստեղծագործականություն, այլ անհրաժեշտ որակներ: Բացի իմացական կարողությունների ապահովումից, ինչպես գիտենք, սովորողը դասից քաղում է նաև բազմաթիվ կենսական նշանակության կարողունակություններ, որոնք անչափ կարևոր են վերջինիս հետագա կենսագործունեության համար: Ուստի և այդ թվում անգլերենի դասի ընթացքում ուսուցչի գերխնդիրն է սովորողի մոտ սոցիալական ունակությունների զարգացումը, որը բխում է հանրակրթության նպատակներից:

Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը[4]: Սոցիալական հմտությունները սովորողներինն անհրաժեշտ են կոնկրետ մարդկանց կամ տարբեր խմբերի հետ արդյունավետ փոխազդեցության, նպատակներին հասնելու, համախոհներ գտնելու համատեղ գործունեության ընթացքում կոնֆլիկտները լուծելու համար: Ուսուցման գործընթացը, որպես ուսուցչի և սովորողի համատեղ գործունեություն, նույնպես պահանջում է սոցիալական հմտությունների զարգացում:

Ուսումնական գործընթացն արդյունավետ իրականացնելու համար ուսուցչից պահանջվում է սովորողի մոտ զարգացնել մի շարք սոցիալական հմտություններ, այդ թվում՝

- Ձևավորել սոցիալական ինքնության հիմքերը, այդ թվում՝ քաղաքացիական, էթնոմշակութային, սոցիալ-տարածաշրջանային, ընտանեկան և այլ առումներով;
- Զարգացնել հարգանք այլ կարծիքների ինկատմամբ;
- Սովորողի մոտ սերմանել հարմարվողականություն, հանդուրժողականություն, հարգանք;
- Զարգացնել անձնական պատասխանատվությունը սեփական գործողությունների համար բարոյական չափանիշների, սոցիալական արդարության և ազատության մասին պատկերացումների հիման վրա;
- Զարգացնել տարբեր սոցիալական իրավիճակներում մեծահասակների և հասակակիցների հետ համագործակցության հմտություններ;
- Ակտիվորեն օգտագործել խոսքի միջոցները և տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցները հաղորդակցական և ճանաչողական խնդիրները լուծելու համար;
- Նպաստել լեզվամտածողության զարգացմանը, խոսքի գիտակցաբար կառուցմանը;
- Կարողանալ լսել զրուցակցին և վարել երկխոսություն;
- Արտահայտել կարծիքը՝ փաստերով հիմավորելով տեսակետն քննադատողական գնահատականը;
- Կարողանալ սեփական նպատակները կապել այլ մարդկանց նպատակների և խնդիրների հետ՝ բաց լինելով համագործակցության համար;

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:

- Համատեղ գործունեության մեջ իրականացնել փոխադարձ վերահսկողություն, համարժեքգնահատելիրենցնուրիշներիվարքագիծը;
- Կառուցողականորեն լուծել հակամարտությունները՝ հաշվի առնելով կողմերի շահերնևամագործակցությունը:

Կարևոր է նկատել, որ նկարագրված զարգացման կատեգորիաները կարող են արդյունավետորեն իրականացվել՝ հաշվի առնելով սովորողների սեռատարիքային առանձնահատկություններն: Սոցիալական հմտությունների զարգացման մեխանիզմները տարբեր դասարանների սովորողների համար տարբեր են: Հաճախ նույնիսկ պայմանավորված նույն դասարանի սովորողների գիտակցական մակարդակով՝ ուսուցիչը պետք է մշակի տարբեր մոտեցումներ, որպեսզի անհատական եղանակով բավարարի բոլոր սովորողների սոցիալական պահանջմունքները: Այսքննարկումներիժամանակսովորողներըմիմյանցնուսուցչի հետմտնումենելեզվական ուղիղշփմանմեջ:

Հաղորդակցությունը գործընթաց է, որի ընթացքում փոխանցվում է տեղեկատվություն մի անձից (անձանցից) մյուս անձին (անձանց): Խմբային քննարկումների ժամանակ, որպես կանոն, կողմերը հաղորդակցվում են բանավոր եղանակով՝ կատարելով տեղեկատվության փոխանակություն. ստանում կամ տալիսենինֆորմացիա:

Հաղորդակցումը բարդ գործընթաց է, և պատահական չէ, որ այն ուսումնասիրության նյութ է դարձել սոցիոլոգների, փիլիսոփաների, հոգեբեզվաբանների, ինչպես նաև հանրալեզվաբանությամբ զբաղվողների համար: Մասնագետներին հետաքրքրում են խոսքի հաղորդումը և ընկալումը, խոսող- խոսակից հարաբերությունների ազդեցությունը խոսքի վրա, այն իրադրությունը, որում ձևավորվում է խոսքը, այն պատճառները, որոնք դժվարություններ են ստեղծում հաղորդակցման համար, այն պայմանները, որոնք նպաստում են հաղորդակցման արդյունավետությունը բարձրացնելուն: Ըստ սոցիոլոգների՝ մարդկանց ժամանակի մեծ մասը ծախսվում է շփման վրա: Հաղորդակցվում ենք բանավոր և գրավոր, խոսքով և առանց խոսքի: Մենք շփվում ենք տանը, ընկերական շրջապատում, աշխատավայրում, փողոցում, խանութում, հասարակական տարբեր վայրերում: Այսինքն՝ մարդու կյանքը առանց շփման, հաղորդակցվելու հնարավոր չէ պատկերացնել: Շփումը գործընթաց է, նպատակին գիտակցաբար հասնելումիջոց[5]:

Կարևոր է, թե քննարկվող նյութն ինչ ծավալի է և բովանդակության: Երկար ու դժվար ընկալելի թեմաների ժամանակ սովորողները հաճախ բաց են թողնում իմաստային հիմնական գիծը՝ սևեռվելով երկրորդական տարրերի վրա, ուստի դասարանական քննարկումների ընթացքում ուսուցիչը պետք է լինի համակարգողի դերում՝ թույլտալով, որյուրաքանչյուրկարծիքլինիարժեքավորուլսելի:

Ինչպես արդեն նշել էինք, դասավանդման համագործակցային մեթոդի արդյունավետ ձևերից է խմբային քննարկումը: Այստեղ յուրաքանչյուր սովորող ունի համագործակցելու և իր տեսակետը ներկայացնելու հավասար հնարավորություն: Խմբային քննարկումները կարող են ընդլայնել սովորողի հասկացողությունը, ավելացնել ակադեմիական բովանդակության համատեքստ, ընդլայնել վերջինիս հեռանկարները, ընդծել հակառակ տեսակետները,ամրապնդել գիտելիքները, ուժեղացնել վստահությունը: Հաղորդակցումը մարդկանց մեկը մյուսի վրա փոխգործողության, փոխներգործության բազմաշերտ գործընթաց է: Այն կարող է դիտարկվել ոչ միայն որպես գիտակցված գործողություն, ռացիոնալ կերպով ձևակերպված տեղեկության խոսքային փոխանակում, այլև որպես մարդկանց միջև անմիջական հուզական ու զգացմունքային շփում: Բանավոր խոսքում փոխկապված են բանականն ու հուզականը: Ուսուցիչները դա շատ լավ գիտեն: Առանց հույզերի չկա ներշնչում, մոտիվացիա, հետաքրքրություն, գիտելիքներ ձեռք բերելու, կյանքի իմաստըորոնելուցանկություն:

Խմբային քննարկումները՝ որպես սովորողների սոցիալական հմտությունների

զարգացման եղանակ, ստիպում է վերարժևորել սովորողի և սովորեցնողի փոխհարաբերությունները: Այստեղ ուսուցչի և սովորողի միջև սկսում է գործել սուբյեկտ-սուբյեկտ հարաբերությունների տիպը: Դա հնարավորություն է տալիս, որպեսզի սովորողն անկաշկանդ լինի իր շփման, հաղորդակցման մեջ, առանց վախերի ու կոմպլեքսների արտահայտի կարծիք: Նման մթնոլորտում սովորողն ավելի ուշադիր է, ինչի արդյունքում էլ ստացած նոր տեղեկատվությունը կարող է դառնալ կայուն գիտելիք: Այսպիսով, կարծում ենք՝ խմբային քննարկումների հաճախակի իրականացումը արդյունավետ կերպով զարգացնում է սովորողի սոցիալական ունակություններնուլեզվամտածողությունը:

Հաշվի առնելով հետազոտության մեջ կատարած մեր արձանագրումները՝ բերենք գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դասի պլան՝ որի նպատակն է յուրացված նյութի նպատակային կիրառությունը՝ դասավանդմանհամագործակցայինմեթոդիօգնությամբ:(Տես հավելված 1)

[5] http://www.ysu.am/files/07A_Adilkhanyan-1558680251-.pdf Ա. Ադիլխանյան, Գիտական հոդված, «Հաղորդակցականիրավիճակիբաղադրատարրերը», Երևան, 2014, էջ79:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով, կատարենք մի քանի արձանագրություն՝ հիմք ընդունելով հետազոտության արդյունքները՝

- ✓ Ուսուցիչը պետք է կատարի իր մասնագիտական պարտականությունները՝ դասի շրջանակներում սովորողների համար ստեղծելով համագործակցային միջավայր;
- ✓ Անգլերենի դասաժամին՝ օտար լեզվով հաղորդակցման ժամանակ, ուսուցիչը պետք է պահանջկոտ լինի սեփական անձի նկատմամբ, վերահսկի իր խոսքը՝ նպաստելով սովորողների լեզվամտածողության ու խոսքային կարողությունների զարգացմանը;
- ✓ Ուսուցիչը պետք է հետևողականորեն զբաղվի ինքնակրթությամբ՝ այդպես նպաստելով սովորողների մոտ սոցիալական հմտությունների զարգացմանը;
- ✓ Սովորողների խոսքային մշակույթը, լեզվամտածողությունն ու սոցիալական հմտությունները զարգացնելու նպատակով ուսուցիչը պետք է անկաշկանդ միջավայր ստեղծի սովորողների հաղորդակցման, մտքերի փոխանակության, ու կարծիքներ հայտնելու համար:

Հավելված 1

Օրվա դասի պլան անգլերենից

Առարկան՝ Անգլերեն Դասարանը՝ 6-րդ
Դասի թեման՝ « Տարվա եղանակները»
Դասի տիպը՝ Ամփոփման, գիտելիքների կատարելագործման դաս Դասի կահավորումը՝ Ցուցապաստառ,

տարվա եղանակների ինկարները Միջառարկայական կապեր՝

Երաժշտություն՝ Ա. Վիվալդի «Տարվա եղանակներ»

Նկարչություն՝ երեխաների աշխատանքները թեմայի շրջանակներում

Դասին կիրառվելիք մեթոդները՝

- Վեննի դիագրամ
- Խմբային քննարկումների մեթոդ
- մտագրոհ
- T-աձև աղյուսակ
- ԳՈՒՄ

Ուսուցիչ՝ Ժ. Ավետիսյան

Դասի նպատակը՝

ա. Գիտելիքներ

Աշակերտը պետք է իմանա՝ տարվա եղանակները, ամիսները, գույները, տարվա եղանակներին բնորոշ հագուստների անվանումները, մրգերի ու բանջարեղենների անվանումները՝ համապատասխան տարվա եղանակներին:

բ. Կարողություններ և հմտություններ Աշակերտը պետք է կարողանա՝

- սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը;
- մեկնաբանել ընթերցածի բովանդակությունը;
- վերարտադրել բնագիրը;
- խմբային քննարկումների ժամանակ լինել ակտիվ՝ զարգացնելով սոցիալական հմտություններն ու լեզվամտածողությունը:

գ. Արժեքային համակարգ՝

- վերաբերմունք արտահայտի բնության պահպանման մասին
- գիտակցի բնապահպանական խնդիրների կարևորությունը
- իմանա որ եղանակի ինչ հագուստ է հարկավոր կրել
- սովորի ճիշտ գնահատել բնության նդերը մարդու կյանքում

Դասի ընթացքը

Վենի դիագրամ մեթոդի օգնությամբ սովորողները հաջորդաբար կներկայացնեն տարվա եղանակներն ու դրանց ամիսները, ապա բանավոր կհատկանշավորեն ամենամի եղանակը՝ բանալի բառերը գրելով T-աձև աղյուսակում:



Spring	Summer	Autumn	Winter
It is windy	It is sunny	It is raining	It is cold

Այնուհետև սովորողները կկարդան բնագիրը և կկատարեն բանալի բառերի ձևաբանական վերլուծություն՝ Spring-գոյական, Summer-գոյական և այլն: Հաջորդիվ գիտելիքն ամրապնդելու համար սովորողները բարձրաձայն կկարդան բնագիրը, ապա ուսուցիչը հանգովկ պատասխանեն հետևյալ հարցերին՝

Ի՞նչ իմացանք

Ի՞նչ պարզեցինք

Ի՞նչ գիտեինք

Ձեր կարծիքը

Հարցերի շուրջ տեղի կունենա քննարկում, ուսուցիչը կլսի կարծիքներ, թույլ կտա, որ սովորողները միմյանց ևս հղեն հարցեր: Համագործակցային եղանակի կիրառման շնորհիվ դասարանում պասիվ աշակերտ չի մնա. Բոլորը քննարկման մեջ են: Գործնական աշխատանքով ուսուցիչը սովորողների մոտ կամրապնդի քննարկմանն՝ությունը: Դասարանը կբաժանվի 4 խմբի, խմբերից յուրաքանչյուրին կհանձնարարվի մեկ տարվա եղանակ, որի վերաբերյալ հարկավոր է գրել բանալի բառեր՝ գույներ, հագուստներ, եղանակային երևույթներ, մրգերի ու բանջարեղենների անուններ, որոնք բնորոշեն տարվա այդ եղանակին:

Winter- Bad weather, It is snowing, cold, a hat, a sweater

Յուրաքանչյուր խմբից մեկը կամփոփի իր խմբի աշխատանքը:

Դասի ամփոփիչ հատվածում ուսուցիչի ակնկալիքը հետադարձ կապ ստեղծելն է: Այդ նպատակով կհանձնարարի բառեր, որոնցով սովորողները կկազմեն նախադասություններ՝ ադպիսով կիրառման մեջ դնելով սովորած բառերը՝ September, cold, winter, spring և այլն:

Դասի ավարտին կկիրառվի ԳՈՒՍ մեթոդը:

Գիտեի

Ուզում էի իմանալ

Սովորեցի

Գնահատում /գնահատումը կիրականացվի՝ հաշվի առնելով համագործակցային փուլում սովորողների ակտիվությունն ու նախաձեռնողականությունը/

Տնային հանձնարարություն

Գրել վերլուծական շարադրություն՝ տարվա եղանակներից որևէ մեկի վերաբերյալ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ հանրակրթության մասինօրենք:
2. http://ysu.am/files/06T_Tonoyan.pdf Թ. Տոնոյան, Գիտական հոդված, « Լեզվի և մտածողության փոխհարաբերությունը տեքստում»:
3. http://www.ysu.am/files/07A_Adilkhanyan-1558680251-.pdf Ա. Ադիլխանյան, Գիտական հոդված, «Հաղորդակցական իրավիճակի բաղադրատարրերը», Երևան, 2014:
4. «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հոդվածներ,Երևան 2020: